Միութենական մամուլի էջերից

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԱՍԵՐԸ

ՎԻԿՏՈՐ ՇԵՅՆԻՍ, տնտեսագիտության դոկտոր

Ռեալ իրողության ըմբռնումը, ուստի և սոցիալական վարքագծի ճշմարիտ ուղու ընտրությունը հաճախ են խանգարում ստահոդ հորինվածքները։ Դրանցից մեկը խորը թափանցել է ոչ միայն առօրյա, այլև գիտական մտածողության մեջ, իբր՝ ճգնաժամերը կապիտալիզմի բախտաբաժինն են, սոցիալիզմի օրոք դրանք լինել չեն կարող։ Արևելյան Եվրոպայի երկրների իրադարձությունները սասանեցին այդ պատկերացումը, բայց իսպառ չվերացրին։ Եվ ՍՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունվարյան պլենումում նախաճգնաժամային իրավիճակի մասին ասված խիստ խոսքերը, իմ համոզմամբ, մեր հասարակայնության կողմից վտանգի լիակատար գիտակցությամբ չընդունվեցին։

Հիրավի, վերահաս ճգնաժամն էլ կանխորոշեց այն շրջադարձը, որ կոչված էր մեր հասարակությանը հեռու պահել վտանգավոր այն սահմանագծից, որին նա ընդհուպ մոտեցել էր մինչև 1985 թվականը։ Սակայն սխալ կլիներ կարծել, թե վերակառուցումը գնալու էր նախապես ճշտված գրաֆիկով։

Քաղաքական սիստեմի կայունացված, երկարատև շրջանում, երբ, թվում էր, պատմական պրոցեսի միակ շարժիչ ուժը օրացույցն է, իսկ կարևոր փուլանիշերը՝ պետական հանդիսավոր հոբելյաններն ու թաղումները, ձևավորվեցին հասարակական գիտակցության վնասակար ստերեոտիպեր։

Մենք մեր պատկերացումները դեռևս չենք հարմարեցրել ժամանակի մեկ այլ ընթացքի, դեկորացիայի ու գործող անձանց արագ փոփոխությանը։ Մենք դեռևս ելնում ենք այն մտայնությունից, թե ունենք եթե ոչ մի ամբողջ հավերժություն, ապա բավական երկար ժամանակ, որի ընթացքում կարող ենք հանգիստ մտքեր փոխանակել, վերակարգավորել տնտեսական մեխանիզմը, վերջնականապես մշակել իրավական երաշխիքների համակարգը, փորձարկել ընտրական ընթացակարգը, զինաթափման վերաբերյալ բանակցություններ վարել, ինչը որ հետագայում միջոցներ կընձեռի բարեկեցությունը բարձրացնելու և այլն։ Վերակառուցման շատ կողմնակիցներ ամենամեծ վտանգը համարում են բարենորոգումների սահմանափակ, պահպանողական տարբերակը։

Ուրախ կլինեի սխալ լինելուս համար, քանի որ աստիճանական վերափոխումները հաճախ առավել հաստատուն են լինում, քան նրանք, որոնք հանպատրաստից են հորինվել, բայց վախենամ, որ այլևս փորձարարության համար ժամանակ չի մնացել։ Այն ոչ միայն կուլ է գնացել լճացման տարիներին, այլև սեղմվում է մեկ այլ կողմից՝ վերակառուցման հետևանքով պոռթկացած, բայց դեռևս չիրականացված հույսերով, նրա պտուղներին սպասելու հանգամանքով։ Վերջերս մեզ հիշեցրին, որ Վ. Ի. Լենինի՝ պարենմասնատրումից պարենհարկին անցնելու մասին սևագիր նշումներից մինչև կուսակցության X համագումարի (որտեղ հաստատվեց սոցիալական արմատական շրջադարձը) զեկուցումը անցել է ընդամենը հինգ շաբաթ։ Ժամանակակից հասարակական կառուցվածքները շատ ավելի իներցիոն են, և դա հղի է լուրջ վտանգներով։

Վերակառուցման անկասելիության օգտին աշխատում է ինքը՝ վերակառուցումը՝ հրապարակայնությամբ, մտածողության անկաշկանդությամբ, հասարակական ակտիվության ու նախաձեռնության զարգացմամբ անգամ այն արգելոցներում, որոնք գտնվում էին վարչա-հրահանգչական համակարգի անձեռնմխելի պահպանության ներքո։ Սակայն վտանգավոր պատրանք կլիներ կարծել, թե մեր միակ հոգսը արգելակող մեխանիզմը փշրելն է։ Նրա հիմքի վրա մոնտաժվում է մեկ ուրիշը, որ առավել վտանգավոր է՝ վերահաստատման մեխանիզմը։ Պատմությունը, ինչ խոսք, երբեք նույնությամբ չի կրկնվում, իսկ լճացմանը կամ տեռորի արյունալի նախճիրին ոչ ոք չի ուզում վերադառնալ։ Բայց քաղաքական առայժմ դեռ անկայուն բալանսի փոփոխությունը,— իսկ վերահաստատման կողմնակիցները իրերն ամեն կերպ հրում են հենց դեպի այդ կողմը,— կարող է խափանել այժմ նկատվող ուղենիշերը և հանգեցնել հեռուն գնացող հետևանքների, քանզի պայքարի տրամաբանությունը շատ ավելի ուժեղ է մարդկային նախնական մտադրություններից։ Վերակառուցումն անշեղորեն իրականացնելու խաղաղ, անաղետ ուղի չկա։ Վերակառուցման անվտանգությունն անխզելիորեն կապված է մեր բազմազգ պետության մեջ խաղաղության առկայության հետ։

Ղարաբաղյան իրադարձությունները վերակառուցման ընթացքի մեջ ցցուն դարձրին քաղաքական ամենախոր ճգնաժամը, ինչից որ անհրաժեշտ է դասեր առնել։

Դրանցից ամենաակներևը սա է՝ ցանկացած իրավիճակը շատ ավելի հեշտ է հսկողության տակ առնել նախքան նրա սրվելը։ Մինչդեռ ազգային քաղաքականության մեջ արդեն ոչ առաջին անգամ դրսևորվեց ճգնաժամային իրավիճակի սրացումը ժամանակին նկատելու անկարողություն։ Այն պնդումը, թե՝ երևույթը չկա, քանի դեռ այն չենք նկատել, միաժամանակ համապատասխանում է քաղաքական նախկին մտածողության ու վարքագծի ստերեոտիպերին, բայց անբացատրելի է դոգմաների հետ հաշիվ մաքրելու պայմաններում։ Էլ ավելի դժվար է բացատրել անգործունությունը կենտրոնում ու տեղերում, երբ բախումն այլևս ակներև էր դարձել։ Սպասումը, թե ամեն ինչ ինքն իրեն կկարգավորվի, թե ճնշումը կթուլանա, հենց որ հոգնությունն իր գործը տեսնի, հանգեցրեց ժամանակ կորցնելուն և ոչ թե շահելուն։ Անդրկովկասում 1988 թվականի առաջին կեսին իրավիճակն արագորեն սրվեց և ամիս առ ամիս դժվարացավ խաղաղ ու արդարացի լուծում գտնելն ու կենսագործելը։

Ազգային քաղաքականության մեջ, ինչպես և այլ ոլորտներում, անհրաժեշտ է հետևողականորեն իրականացնել վերակառուցման հիմնական սկզբունքները՝ դեմոկրատացումը, պատասխանատվությունը, հրապարակայնությունը։ Այս ամենը ենթադրում է առկա խնդիրների անկաշկանդ քննարկում, տարբեր կարծիքների ու մոտեցումների հանգիստ համադրում։ Այդպիսի քննարկում չեղավ ղարաբաղյան իրադարձությունների պոռթկման շրջանում։ Հրապարակայնությունը, ինչպես իրավացիորեն նկատեց Ա. Դ. Սախարովը, չգործեց հենց այն պահին, երբ ամենից շատ էր հարկավոր։ Բայց հետագայում էլ, երբ մասսայական ինֆորմացիայի միջոցներն սկսեցին այդ իրադարձություններին առավել ուշադրություն նվիրել, պրոբլեմի հանդեպ մոտեցումը գերազանցապես մնաց միակողմանի, քանի որ վարչա-տերիտորիալ առկա սահմանների անփոփոխելիությունը համարվեց անվիճելի, հիմնական սկզբունք, այլ ոչ թե լուծման հնարավոր տարբերակներից մեկը։ Հենց դա և ոչ թե ինչ-որ «մութ ուժերի» սադրանքները, ճնշումն ուժեղացնելու մղեց այն կողմին, որն իրեն ճնշված ու վիրավորված էր համարում։

Հարկ եղած չափով չգնահատվեց, թե իրադարձությունների զարգացման մեջ ինչպիսի խոր հետք թողեց Սումգայիթի ողբերգությունը, թե այն հուսահատության ու ընդվզման ինչ ալիք բարձրացրեց հայ ժողովրդի հոգում՝ նրա պատմական հիշողության մեջ վերաթարմացնելով 1915 թ. ցեղասպանությունը։ Իմ կարծիքով, Հայաստանից դուրս Սումգայիթի հանդեպ վերաբերմունքը եղել ու շարունակում է մնալ չարագործությանը ոչ համարժեք։ Այն եղելությունները, որոնք շիկացրին հույզերը, հիրավի, հանգիստ չեն կարող թողնել ոչ միտքը, ոչ խիղճը։ Ինչ խոսք, դրանց պատասխանատվությունը չի կարելի դնել Ադրբեջանի ողջ ժողովրդի վրա։ Բայց ջարդարարներից իրենց հայ հարևաններին թաքցրած ադրբեջանական ընտանիքները իրենց ավելի արիական ու արժանապատիվ պահեցին, քան այն իշխանությունները, որոնք անհասկանալի երկչոտություն դրսևորեցին իրադարձություններին քաղաքական գնահատական տալիս, ասես վախենալով վիրավորել ոմանց զգացումները։

Համամարդասիրական հետևողական մոտեցումը, թվում էր, պիտի հուշեր, որ անհրաժեշտ է առաջին հերթին անուն առ անուն հրապարակել սումգայիթյան ջարդերին զոհ դարձած հայերի ցուցակը։ Դա կարող էր անմիջապես վերջակետ դնել զոհերի քանակին վերաբերող վեճերին, էլ չենք խոսում այն մասին, որ եղելությունների նշանակությունն ու համերաշխության տարրական զգացումը պահանջում էին համաժողովրդական սուգ հայտարարել (որ, տեղն է հիշեցնելու, վերջին տարիներին մեզանում հայտարարվում էին նվազ էական առիթներով)։ Բայց, եթե առաջին հակազդումը դեռ կարելի է բացատրել պարզ շփոթվածությամբ, ապա անհասկանալի է, թե ինչու մասսայական անկարգությունների ու բանդիտիզմի (և ոչ թե խուլիգանության) մասնակիցների ու կազմակերպիչների դատին չտրվեց հասարակական համապատասխան հնչեղություն, և հրապարակայնությունն ասես թե խլացվեց։ Մինչև օրս հստակ պատասխան չի տրվել և այն հարցին, թե ով է պատասխանատու և ինչպես կարող էր պատահել, որ վճռական միջոցներ են ձեռնարկվել Ադրբեջանի մայրաքաղաքի հարևանությամբ կատարված ջարդարարության միայն երրորդ օրը։ Քաղաքական ու բարոյական խլությունը խանգարել է ժամանակին կամուրջ գցել Երևանի ու Բաքվի միջև։

Ազգամիջյան վեճերի ամեն մի հաստատուն ու արդարացի լուծում պետք է խարսխվի փոխզիջման, այլ ոչ թե կողմերից մեկի «հաղթանակի» վրա։ Կարևոր է հաշվի առնել, որ ղարաբաղյան ճգնաժամը կենտրոնական պետական իշխանությանը դրել է դժվար կացության մեջ. բողոքարկել են երկու կողմերն էլ, և նրա վրա ընկած էր կարգը պահպանելու, տնտեսական կյանքի նորմալ ընթացքը վերականգնելու պատասխանատվությունը։ Դրա հետ մեկտեղ կենտրոնի՝ քաղաքական հնարավոր լուծումների շրջանակը չափազանց սահմանափակ էր։ Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու ժողովրդական շարժման բռնի ճնշումը (ինչին որ կդիմեին անցած տարիներին) աղետալի հետևանքներ կունենար վերակառուցման համար։ Բայց և չի կարելի կենտրոնի վոլյունտարիստական որոշմամբ փոխել հանրապետությունների սահմանները, ինչպես դա եղել է անցյալներում, քանի դեռ չկա երկկողմանի համաձայնություն։ Վերջապես անչափ կարևոր է կանխել ազգամիջյան վեճերի ու պահանջների շղթայական ռեակցիան, ինչը որ կործանարար նշանակություն կունենա վերակառուցման համար։

Ժամանակը ցույց կտա, թե որքա՞ն լավագույնն էր ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության 1988 թ. հուլիսին ընդունած որոշումը, երբ երկու հարևան հանրապետությունների գերագույն սովետների տրամագծորեն իրար հակառակ որոշումներն ստեղծել էին փակուղային վիճակ։ Բայց ընդհանուր այն դրույթը, որ փոխզիջումը պետք է մշակվի կողմերի համաձայնության հենքի վրա, այլ ոչ թե թելադրվի կենտրոնից, ճիշտ է։ Իսկ ինչպե՞ս կարելի է հասնել փոխզիջման։

Թեև վիճաբանական իրավիճակն ստեղծվել է մեծ մասամբ անցյալի քաղաքական ու սոցիալական քաղաքականության սխալների հետևանքով, չի կարելի հուսալ, թե իբր ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ հայտնի որոշումները պարունակում են կարգավորման բոլոր անհրաժեշտ և բավարար նախադրյալները։ Ինքը՝ ծրագիրը, կարիք ունի իրականացման քաղաքական երաշխիքների։ Այդ երաշխիքների որոնումն էլ խնդրի առանցքն է։ Ընդհանրապես սխալ է կարծել, թե ազգամիջյան սրված բախումները կարելի է լուծել համամիութենական ֆոնդից այս կամ այն երկրամասին հատկացված լրացուցիչ միջոցներով։ Նախ՝ այդ ֆոնդն անսահմանափակ չէ։ Երկրորդ՝ եթե անգամ ազգային լարվածությունը ուղեկցվում է տնտեսական իրական կամ հնարովի ոտնահարման զգացումով, ապա չի կարելի այն վերացնել միայն նյութական միջոցներով, քանի որ ազգային գիտակցությունը չափազանց նուրբ ու խոցելի ոլորտ է. համակրանքն ու հակակրանքը, մի անգամ ծնվելով, ապրում են իրենց սեփական օրենքներով։ Ազգային ոտնահարված զգացումը ներկայացնել որպես նացիոնալիզմի դրսևորում, ինչ-որ մի «ձև», որը պետք է ենթարկվի սոցիալ-տնտեսական «բովանդակությանը» (դա արեց, օրինակ, Լեռնային Ղարաբաղի մասին հեռուստահաղորդումը մեկնաբանող փիլիսոփան)՝ կնշանակի ռեալ, առկա պրոբլեմը մղել անիմաստ սխոլաստիկայի խորքերը։

Իսկական դեմոկրատական ու պլյուրալիստական մոտեցումը ենթադրում է, որ հասարակության մեջ կարող են լինել տարբեր շահեր, որոնք համախմբում են սոցիալական այս կամ այն խմբերին, այդ թվում և՝ ազգային հողի վրա։ Պրոբլեմը ծագում է այն դեպքում, երբ ազգային մի խմբի շահերը բախվում են մյուսի իրական կամ երևակայական շահերին։ Այդպիսի տարաձայնություններ կարող են ծագել նաև սոցիալիստական հասարակարգում, և խնդիրն այն է, որ դրանք չհասցվեն անտագոնիզմի, թշնամության։

Ղարաբաղյան կոնֆլիկտում, ինչպես և ուրիշ ազգային փոքրամասնությունների ելույթներում ուշադրություն գրավեցին, իսկ հաճախ նաև դատապարտման արժանացան պահանջները պաշտպանող սոցիալական գործողությունների անսովոր ձևերը՝ բազմամարդ միտինգները, գործադուլները, հացադուլները։ Այդ գործողությունները, որպես կանոն, կապված են տնտեսական, սոցիալական, քաղաքական ծախսերի հետ, իսկ հասարակական կարգի խախտման որոշ փաստեր անչափ վտանգավոր են և արժանի են դատապարտման։ Բայց պակաս վտանգավոր չէ դրանով բավարարվելը։ Չէ որ ստատուս-քվոն պաշտպանողների և բոլոր նրանց դիրքերը, ովքեր դեպքերի ընթացքին հետևելով՝ սպասում են, անկասկած, ավելի ուժեղ են, քան նրանցը, ովքեր ջանում են հասնել փոփոխության և իրենց պահանջներն առաջ են քաշում արտասովոր, հաճախ բավականին սուր ձևերով։ Չի կարելի լարվածության համար ողջ պատասխանատվությունը բարդել միայն մի կողմի վրա, անտեսելով, թե մյուս կողմն ինչ չափով է հակված զիջումների ու փոխհամաձայնության, իսկ կենտրոնական իշխանությունը պատրաստ է իր խոսքն ասելու։ Ապշեցուցիչն այն չէ, որ մասսայական շարժումն ընդունակ է նման էքսցեսներ ծնելու, այլ այն, որ դա տեղի ունեցավ մի քանի ամիս հետո, որոնց ընթացքում իրավիճակի վտանգալի բնույթը ու անվերահսկելի իրադարձությունների ծավալման հնարավորությունը ակնհայտորեն թերագնահատվեցին։

Ինչ խոսք, գործադուլը անչափ սուր զենք է, որի անպատասխանատու և ոչ չափավոր գործածությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ։ Բայց հազիվ թե օրինաչափ լինի տնտեսական կապերի խախտման և կյանքի նորմալ ռիթմի խանգարման ամբողջ մեղքը բարդել բացառապես գործադուլավորների վրա, առավել ևս նրանց դեմ հարուցել մարդկանց դժգոհությունը, կիրառելով սոցիալական գործողության այն միջոցը, որից մենք հետ ենք սովորել, բայց որը ամբողջ քաղաքակիրթ աշխարհում ընդունված է համարել աշխատանքից խույս տալ։ Պրոբլեմի էությունից շեշտը գործողության մեթոդների վրա փոխադրելը ծնում է միակողմանի մոտեցման օրինական կասկած։

Բայց առավել խիստ դատապարտության է արժանի «կարգ» հաստատելու համար ուժի դիմելու կարոտը, որը երբեմն մամուլ է թափանցում և հենց մինչև անգամ ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության նիստի որոշ ելույթներում։ Խորհուրդ են տալիս ուժ գործադրել ի պատասխան այն ճնշման, որին ենթարկվում են պետական մարմինները։ Գործողությունները, որոնք կոչված են հասարակական կարծիքն ուղղելու այն պահանջներին, որոնց նրանք մեծ նշանակություն են տալիս, առայժմ պահպանում են իրենց խաղաղ, օրինական բնույթը և անխզելիորեն կապված են դեմոկրատացման պրոցեսի հետ։ Խստություն գործադրելու այն դիրքորոշումը, որի պաշտպանությամբ հանդես եկան որոշ պաշտոնատար անձինք ու մամուլի օրգաններ, առավել ևս սրեց իրավիճակն ու տեղի տվեց կրքերի նոր բորբոքման։ Վերակառուցումը լուրջ փորձություն է անցնում, հարցը դրված է ամենայն լրջությամբ՝ պատրա՞ստ ենք քաղաքակրթորեն, առանց ճնշման սովորական մեթոդներին դիմելու լուծել ճգնաժամային իրավիճակ։

Եկել է այն հարմարավետ պատկերացմանը հրաժեշտ տալու պահը, թե ազգային ու քաղաքական կրքերի շիկացում են ստեղծում ոմն էքստրեմիստներ, արտաքին թշնամու գիտակից կամ անգիտակից գործակալներ։ Անհրաժեշտ է Միության ներսում մշակել ազգային զարգացման վիճելի հարցերը կարգավորելու սկզբունքներ ու մեթոդներ, որոնք հիմնված լինեն ազգային փոքրամասնությունների ցանկություններն ու կամքի արտահայտությունը հարգելու վրա։ Ինչ խոսք, նրանց ոչ բոլոր ցանկությունները, մասնավորապես վարչական կառուցվածքին վերաբերող ցանկությունները կարող են լիովին ու անհապաղ բավարարվել, այն էլ՝ ինքնակամ կերպով։ Բայց փոքրաթիվ ժողովուրդների ազգային ինքնորոշման բարդ պրոբլեմները չեն կարող լուծվել միայն թեկուզև ամենահեղինակավոր «մարմինների» կողմից։

Նմանօրինակ ճգնաժամային իրավիճակները վերացնելու, կամ որ ավելի լավ կլիներ՝ կանխելու ունիվերսալ մեթոդ թերևս կարող էր լինել կուսակցական-պետական մարմինների իրավահավասար երկխոսությունը մասսայական շարժումների ներկայացուցիչների հետ, քանի որ նրանք հարգում են օրինականությունն ու կարգուկանոնը և պահպանում են քաղաքակիրթ վարքագծի նորմերը։ Նման երկխոսության սկզբում կողմերի ելակետերը, բնականաբար, կարող են տարբեր լինել։ Սակայն ամենասուր հարցերն անգամ պետք է պատասխան ստանան մեր հասարակության դեմոկրատացման ու հումանիզացման ընդհանուր կուրսի ընթացքով։

Ի դեմս ինքնագործ այն շարժումների, որոնց առաջադրած ցանկություններն ու պահանջները համահունչ են բազմաթիվ մարդկանց իղձերին և որոնք կողմնակից են խաղաղ, ոչ բռնի գործողությունների, հարկավոր է տեսնել ոչ թե դեստրուկտիվ, այլ կոնստրուկտիվ ուժ, որը նպաստում է վերակառուցմանը։ Դրանք վերածնվող քաղաքացիական հասարակության բջիջներ են, քաղաքական պլյուրալիզմը կենսագործող ձևերից մեկը։ Նրանց հետ հանգիստ ու հարգալից երկխոսությունը լավագույն միջոցն է մեկուսացնելու այն տարրերին, որոնք շահագրգռված են առճակատում ստեղծելով, այլ ոչ թե փոխզիջման ուղիների որոնմամբ։

Ազգային ինքնագիտակցության քաղաքական պոտենցիալը հարկավոր է ոչ թե մղել օպոզիցիայի դիրքերը, այլ այն ծառայեցնել վերակառուցման, դեմոկրատիայի ու սոցիալիզմի շահերին։ Մի շարք հանրապետություններում ազգային ձևավորումները վերաճել են Ազգային ճակատների, որոնք միավորում են վերակառուցման ակտիվ կողմնակիցներին։

Ղարաբաղյան պրոբլեմի կարգավորման գործում անչափ կարևոր դեր կարող է խաղալ Ազգությունների սովետի հատուկ հանձնաժողովը, որը պետք է բարձր կարգավիճակ ստանա և որի աշխատանքներում հարկավոր է ներգրավել ոչ միայն պատասխանատու աշխատողների, այլև Հայաստանի ու Ադրբեջանի, կենտրոնի ու պաշտոնատար հեղինակավոր մարդկանց, լայն հասարակայնության ներկայացուցիչների։ Հանձնաժողովը պետք է գտնի և իշխանության պետական բարձրագույն մարմնին (կարելի է նաև համաժողովրդական քննարկման) ներկայացնի ճգնաժամից դուրս գալու փոխզիջման տարբերակ, որի ուրվագծերը նշվել են Գերագույն սովետի Նախագահության որոշման մեջ։

Միության ներսում առանձին կազմավորումների սահմանների ու կարգավիճակի պահպանումը կամ փոփոխությունը անչափ դժվար է շատ պատճառներով։ Այստեղ բախվում են երկու իրավական սկզբունք՝ ազգի ինքնորոշման իրավունքը, որը չպետք է կախված լինի գերիշխող ազգի ցանկությունից, և պետական ինքնուրույնությունը, որով մասնավորապես նախատեսվում է առանց իր ցանկության հանրապետության սահմանների փոփոխման անհնարինությունը։

Իմ կարծիքով, ազգի ինքնորոշման իրավունքը ըստ էության վեր է, ավելի կարևոր է պետական ինքնուրույնությունից, և սա պետք է իր արտահայտությունը գտնի նոր Սահմանադրության մեջ։ Սա համապատասխանում է թե՛ այն գաղափարներին, որ պաշտպանում էր Լենինը դարասկզբին, թե՛ համադեմոկրատական այն իրավագիտակցությանը, որ աշխարհում ամրապնդվում է մեր այս հարյուրամյակի վերջում։ Ոչ թե հույզեր, ոչ թե սահմանների կամայական վերաձևում, այլ ապավինում բանականությանը, ասում են մեզ, պահանջում են այսօր։ Սակայն բանականությունը չի կարող անտեսել, հաշվի չառնել հույզերը, իսկ ղարաբաղյան վեճում ժողովրդի վիրավորված ու վրդովված զգացումը պատմական ծանր ճակատագրի հետ մեկտեղ բախվեց տարածքային ամբիցիայի ու հեղինակության սխալ ըմբռնված դատողություններին։ Ես խորապես հավատում եմ, որ ադրբեջանական ժողովուրդը կարող է գիտակցել, թե որքան անհավասար են այդ արժեքները և, որ ավելի լավ է բարեկամ ունենալ իր տան մոտ, քան նրա մեջ բռնի ուժով պահել մի այլ ժողովրդի։

Միևնույն ժամանակ հարկավոր է հաշվի առնել, որ ՍՍՀՄ էթնիկական քարտեզը այժմ էապես տարբերվում է վարչա-տերիտորիալ բաժանումներից։ Այդ տարբերությունը, ըստ երևույթին, գնալով ուժեղանալու է։ Մեծանալու է ազգային խառը կազմ ունեցող տերիտորիաների թիվը։ Դրա առընչությամբ ծագող պրոբլեմների բավարար լուծման համար հարկավոր է անշեղորեն անցկացնել տնտեսական ու քաղաքական ապակենտրոնացման կուրս, ընդարձակել տեղական մարմինների իրավասությունները, տնտեսության մեջ առավել խթանելով զարգացնել ուղղակի կապերը, որոնք երկրորդ պլան կմղեն պետական ձևականության՝ տնտեսական գերատեսչությունների համակարգում այս կամ այն օղակին ենթարկվելու հարցը, իսկ տերիտորիալ ինքնավարությունը անհրաժեշտ է լրացնել ազգային-մշակութային ինքնավարությամբ, որը կարողանա համարժեք արտահայտություն գտնել պետական իշխանության մարմինների կառուցվածքում, և մասնավորապես ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի ծրագրվող ռեֆորմի մեջ։ Իսկ ազգային փոխհարաբերություններում ճգնաժամերն ու լարվածությունները արմատապես վերացնել կարելի է միայն քաղաքական կյանքի խոր դեմոկրատացման շրջանակներում։

«Հեղափոխությունը պետք է կարողանա ինքն իրեն պաշտպանել»։ Հաճախակի կրկնվող այս դրույթը շատ դեպքերում ստանում է նեղ և պարզապես սխալ մեկնություն։ Մարդիկ, որոնք փոքրինչ պատկերացում անգամ չունեն 70-ական թվականների սկզբին Չիլիում ուժերի ռեալ տեղաբաշխման մասին, Ս. Ալիենդեի իշխանությանը մեղադրում են պաշտպանական միջոցներ ձեռնարկելու անվճռականության մեջ։ Մինչդեռ հասարակական՝ ինչպես հեղափոխական, այնպես էլ բնաշրջական բարեփոխությունների ամենահուսալի պաշտպանությունն այն է, որ ամեն մի փուլում նրանց համար ապահովվի սոցիալական կայուն ու լայն բազա, նպատակներն ու միջոցները համապատասխանեն ռեալ իրավիճակին, համարժեք վերաբերմունք ցույց տրվի այն իրադարձություններին, որոնք սպառնում են վերահսկողությունից դուրս գալ։

Մեր յուրաքանչյուր անցնող օրը, ինչպես երբեմն ասում են՝ աշխատո՞ւմ է վերակառուցման օգտին, ավելի՞ է դարձնում անշրջելի։ Այս հարցի պատասխանը կարող է լինել և այո՛, և ո՛չ։ Այո, որովհետև միլիոնավոր մարդկանց գիտակցությունը ինտենսիվորեն մաքրվում է հին ստահոդ հորինվածքներից, «պտուտակի» դերին հաշտվելուց։ Ոչ, որովհետև մեծանում է խոսքերից ու կարգախոսներից հոգնությունը, բումերանգի պես հետ են թռչում չարդարացված սպասումներն ու չիրականացված հույսերը։ Եվ այդ պատճառով էլ այսօր այլևս բավարար չէ համոզել ինքն իրեն և ուրիշներին, թե ինչքան վատ կլինի առանց վերակառուցման։ Էլ ավելի կարևոր է ինքդ քեզ հաշիվ տալ, թե այն ինչու և ինչպես կարող է ձախողվել։ Բացառիկ բարդ, պատմականորեն նորածին պրոցեսը ինքը անխուսափելիորեն ծնում է սրված վիճակներ, որոնք կարող են ձեռք բերել վտանգավոր բնույթ։ Հազիվ թե հաջողվի դրանք իսպառ վերացնել. հարցն այն է, թե դրանք ինչպես կարելի է կանխատեսել, մեղմել և նրանցից դուրս գալ նվազագույն կորուստներով։ Վերակառուցումը կբախվի ստորջրյա խութերին, եթե այնպիսի ճգնաժամ բռնկվի, որը չկարողանանք կանխել կամ հաղթահարել։